ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ.

# ԽԱՆԳԱՐՈՒՄ Է ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

*Այցելելով Տավուշի շրջան, Հայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը հարցազրույց տվեց Արմենպրեսի թղթակցին:*

***– Պարոն նախարար, Ձեր կարծիքով ե՞րբ կստորագրվի քաղաքական մեծ համաձայնագիրը: Հաղորդումներ են երևացել, թե հնարավոր է արդեն սեպտեմբերին:***

– Ազնվորեն ասած, ես չեմ կարող որոշակի ժամկետներ նշել: Համաձայնագիրը ինքնին շատ բարդ փաստաթուղթ է: Մենք մեր կողմից միշտ պատրաստ ենք եղել խաղաղության, ինչը չես ասի Ադրբեջանի մասին:

***– Բայց ի՞նչը կարող է խանգարել այժմ, երբ Ադրբեջանը, Հայաստանի և ԼՂՀ-ի հետ միասին ստորագրելով ժամանակավոր զինադադար, փաստորեն ճանաչել է Լեռնային Ղարաբաղը:***

– Նախ և առաջ Ադրբեջանի ներքաղաքական իրադրությունը: Չէ որ այնտեղ ով էլ իշխանության գլուխ էր անցնում, խոստանում էր մի ամսվա ընթացքում վերջացնել հաշիվները Ղարաբաղի հետ, բայց ամեն մի նոր եկող, ի վերջո, ավելի շատ տարածքներ էր կորցնում, անհամեմատ ավելի մեծ զոհեր կրում: Այդ պատճառով էլ այժմ Ադրբեջանում չկա մի մարդ, որը համաձայներ պատասխանատվություն ստանձնել՝ իր ստորագրությունը դնել մի այնպիսի լուրջ փաստաթղթի տակ, ինչպիսին քաղաքական մեծ համաձայնագիրն է:

***– Հույս կա՞, որ եթե ոչ սեպտեմբերին, ապա գոնե մինչև տարեվերջ համաձայնագիրը կստորագրվի:***

– Չեմ կարող ասել: Բայց որ ռազմական գործողությունները դեռ շատ երկար ժամանակ չեն վերսկսվի, այդ մասին կարող եմ ասել որոշակիորեն: Ադրբեջանում լավ են հասկանում, որ իրենց դիմակայում է ԼՂՀ-ի պաշտպանության շատ ուժեղ բանակը, որն ի վիճակի է արժանի հակահարված հասցնել: Իսկ եա՞ ինչ որ բան կորցնելը, ռազմաճակատում հերթական անհաջողություն կրելը նշանակում է վերջ ադրբեջանական ցանկացած ղեկավարի, այդ թվում և Ալիևի համար: Բանակցությունները ձգձգվում են քաղաքական պրակտիկայի նպատակներով: Յուրօրինակ խաղանովում է դերի ունենում: Դիվանագիտական կեռամանները նվազ հասկանալի են ժողովրդին, քան պատերազմական գործողությունների վերաբերյալ ամփոփագրերը...

***ԲՈՐԻՍ ՋՅՈՒՋԱՐՅԱՆ***
***(ԱՐՄԵՆՊՐԵՍԻ ԹՂԹԱԿԻՑ)***